ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/373 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ	Երկհարկանի մահճակալի կոնստրուկցիան պետք է լինի ամուր, հուսալի և չսպառնա երեխայի անվտանգությանը: Հումքը, որից պատրաստվելու է մահճակալը, պետք է լինի հաճարի փայտից և լամինատի համակցությունից, էկոլոգիապես մաքուր, հղկված և լաքապատ, նախընտրելի է փայտի բաց երանգները: Մահճակալը պետք է լինի բարձր կողամասերով, առկա լինի սանդուղք, սանդուղքի վրա պետք է լինեն բռնակներ՝ բարձրանալու համար՝ չժանգոտվող մետաղական կամ այլումինե կցամասերով: Մահճակալի չափսերը՝ առնվազն 180x90x85 սմ: Հարկերի միջև եղած բարձրությունը պետք է լինի բավականաչափ, որպեսզի և՛ երեխան, և՛ մեծահասակը կարողանա նստել: Մահճակալի առաջին հարկի տակ պետք է առկա լինեն դարակներ՝ առնվազն երկու հատ՝ բռնակներով և համակցված պահարան: Մահճակալը ունենա 2 ներքնակ (մատրաս), որի չափսերը համապատասխանում են երկհարկանի մահճակալի կոնստրուկցիայի չափսերին: Ներքնակի բարձրությունը չպետք է գերազանցի մահճակալի կողամասերը: Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը մատակարարել մատակարարի հաշվին և միջոցներով Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից տրամադրված հասցեներով: Ապրանքի համար պարտադիր պայման է չօգտագործված (նոր) լինելը, մահճակալի և ներքնակի համար առնվազն 1 տարվա երաշխիք:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ИП Арман Габриелян Ваганович в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁՐ-26/373 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		